

Այդ անձի ազնուասրտութեան հետ ընթերցողին ծանօթացնելու համար՝ բառ առ բառ թարգմանում եմ նորա ինձ ուղղած հեռագիրը:

Փօթի, ապրիլ 26-ին 1882.

„Շնորհաւորում եմ ձեր նախապահորդութիւնից ողջանդամ վերադարձը: Բաւականութեամբ ընդունում եմ իմ ճաշուին, ձեր բոլոր դասախօսութիւնների տրւած պարտութեան ծախսը. կանխապէս ստորագրելով ամեն մէկից 100-ական օրինակների“:

ՄԵԼԻՔ. ԷԼՅԿԸՋԵԼՆ

Ներկայ աշխատութեանս աւելացրել էի եւ իմ ճանապարհորդած աշխարհի մեծագիր աշխարհագրական քարտէզ «Հայոց թագաւորների ամարանոց եւ զօրանոց» անունով, ինչ տեղ անձամբ եղել էի՝ ուղագրութիւն էի դարձրել դրից, լեռների գիւղերի եւ այլն աշխարհագրական անունների ճշգրտութեան: որոնց անսխալ հրնջում չէ յաջողվում օտարներին. օգուտ քաղելով նաեւ ամենանոր քարտէզներից: Բայց մի քանի անկախ պատճառներից ստիպված չը կարողացայ հրատարակել:

Աւարայրի դաշտը դրել եմ $62^{\circ}30'$, $62^{\circ}45'$, $30^{\circ}0'$, $38^{\circ}45'$, լայնութեան եւ երկայնութեան տակ: Խոյա (հերեւ Ջարե-